

նա ևս պիտի գայ ծանուցանելու անկույնն ոչ թէ մի չար թագաւորի միայն, այլ մի աստուծոյ, որ այն ինքն է Արես (Հրատ), պատերազմի սիրելի աստուածոյն, պատերազմոյց պաշտպանն է ջարդերու, որուն աստեղաբաշխութիւնն նուիրելով Հրատ մոլորակն, կը վերագրէր յիւրախ աւեր, բոլոր աղետալ ազդեցութիւնները:

Այսպէս ուրեմն 1919 Մայիսի 29<sup>ի</sup> խաւարումն, ամենցից աւելի Համարաւորն պիտի բլլայ, և օրհնաբանալն իրիկ խաղաղութեան խաւարումն, կամ աւելի ճիշդն խօսելով, Պատերազմի խաւարումն, երբէն անով սկսուի նոր դարաշրջան մը, յորում պատեւրագն (ա՜հ! զուր յոյսեր) ընդ միշտ մնայ խաւարած երկրիս երեսն:

## Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն

### ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. տես 1919 թգմ. էջ 181)

#### ՎԵՆԵՏՈԿԵՐՆԱՆ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վենետիկցիներն ձենովացիներուն մեծ ազդեցութիւնը շունեցան Սե ծովուն մէջ. և ասոնցմէ շատ աւելի ուշ գաղթականութիւն մը հիմնեցին: Մեր ճանչցած ամենահին վկայագիրը՝ զոր տուած է Տրապիզոնի մէջ կայսրը Վենետիկեացի՝ 1319ին է: Այս վկայագիրը՝ Ալէքսիս Բ. կայսրն է Վենետիկոյ դեսպան Միքիէլ Բանդալէոնի՝ ուղղուած 1319ին, այս յատուկ նկարագիրն ունի, որ նոր դրութեան մը հիմքեր կը դնէ. կը տեսնենք որ կայսրը Վենետիկեացի կը թոյլատրէ կազմակերպելու համար նաւամատոյց մը (scalum facere) Տրապիզոնի մէջ ձենովացոց ունեցածին սէս. անոնց կը նշանակէ հողամաս մը՝ շինելու համար շտեմարան մը, եկեղեցի մը և բնակութեան տուներ. կը թոյլատրէ նաև որ ունենան պոյլ մը: Եւ կը տեսնենք որ Վենետիկոյ Դերակոյսը 1320ի և 1322ի միջև՝ տեղոյս պայլին կը դրվէ հարկեր ոսկիի գումար մը՝ շինելու համար հոն ճեմելիք և համբարանաց մը ու բնակութեան տուներ:

Գաշաթուղթին բնագրին մէջ պարունակուած նկարագրութիւնները կարգաւորվ, կը տեսնենք որ այս չնկերը շինութեան այն հողին վրայ զոր կայսրը ձենովացոց տուած էր 1300ին և ետ առած էր 1316ին: Պիտի տեսնենք որ ասիակ կուրի պատճառ կ'ըլլայ Վենետիկոյ և ձենովայի միջև: Տրապիզոնի մէջ՝ Վենետիկեացոց առաջին

պոյլը եղաւ ձիովանիի Սանուտո: ձիովանիի Սորանցո սոժը՝ 1320ին հրամայեց իրեն որ գաղթականութեան իւրաքանչիւր անդամն տուրք մ'առնէ՝ տասնէհինգ առ հարիւր՝ ունեցածնուն վրայ. և Սանուտո՝ իրեն եղած ազգաբարութեանց համեմատ՝ հաւաքած գումարին մէջ երրորդը գործածեց՝ նոր թաղին շինութեան համար. մնացածը դրամին գալով, մէկ մասը տուաւ Միքիէլ Տօլֆինոյի՝ իբրև ուղեւորի՝ երբ Տրապիզոնէն կ'անցնէր Դավրիճ երթալու համար՝ Վենետիկոյ դեսպանութեան պաշտօնով. միւս մասն ալ ձիովանիի Բրիտիլ վաճառականին տուաւ՝ իր առուտունին օգնելու համար, պայմանաւ որ երկուս միւս վերջ վերադարձնէր գրամագլուխն և շահը՝ ուղղակի սոժին: Այս մանրամասնութիւններէն կը հետեի նախ, թէ այս թուականին՝ գաղթականութիւնը դեռ պէտք էր շինել հասարակ և անհատական բնակութիւնները. երկրորդ՝ դեռ իրենց կազմուելու տալիքն օրերէն՝ կը ստիպուէին տուրք վճարել և մասն առնուլ այն բոլոր ծախքերուն որ կ'ըլլային՝ Պարսկաստանի հետ եղած վաճառականութեան մղում տալու համար. և այս շատ բնական էր՝ քանի որ Տրապիզոնի մէջ բնակող Վենետիկցիները՝ առաջիններն ըլլալու էին այս առթիւն օգտու քաղելու: Կը տեսնենք որ Ալէքսիս հաւատար կերպով կը վարուի ձենովացոց և Վենետիկեացոց հետ. թոյլ կու տայ որ իրենց կլիմաներն ու չափերը գործածեն, իրենց ազգակից միջնորդներն ունենան, և այս երկու ազգերու առուտուրին վրայ դրուած տուրքերը նման և հաւասար ըլլան:

#### Տրապիզոնի կոնիւները:

Ալէքսիս Բ.ի թագաւորութիւնը, որուն երկու վաճառիկ ազգերը շատ պարտական էին իրենց ընդունած կարևոր առանձնանորհներուն և ինչ-

1. Այս վկայագիրը հրատարակուած է Canestrini-ի ջրած հետեւաւ ճառախօսութեան յանդիմանին մէջ. Discorso sulle relazioni commerciali dei Veneziani con l'Armenia e con Trebisonda. - Arch. stor. ital. App. IX. 374-378.

քերուկ համար, զօրաւոր և արդիւնաբեր եղած էր: Բայց իրմէ վերջ, և մասնաւորապէս իր երկրորդ որդի Վասիլ Ա.-ի մահէն վերջ (1340), ներքին երկպառակութիւններ երկրին քանի մը մասերուն կորստեան պատճառ եղան: Երկու մեծ խազմարար խումբեր, գրեթէ հաւասար ուժերով, կ'ուզէին իշխանութիւնը ձեռք ձգել. պայտատական յեղափոխութիւնները իրարու յաջորդեցին կարճ ընդհանուր պատերազմով. խռովութիւնները, կողոպուտի տեսարանները մայրաքաղաքին փողոցներու աւերակ դարձուցին: Այս քողաքական կոտորի մէջ՝ կայսրութեան համար տկարութեան պատճառ մը կար որմէ Ամիդի (Տիարաքէրի) Թուրքմէններն օգտուեցան՝ անոր վրայ յարձակելու համար. առաջին արշաւադէն ի վեր (1341 յուշտարին), մինչև մայրաքաղաք հասան և հըրդեհեցին զայն: Բնակարանապէս զաղթականութիւններ իրարու մէջ կը բաժնէին հասարակաց նեղութեան վիճակը: Վենետեան թաղը մոխրի վերածուեցաւ՝ ինչպէս նաև բոլոր քաղաքը, և շատ հաւանաբան է որ, թէև վկայազոր չի յիշատակեր, ճնշումվախն ալ մինչոյն վերջն ունեցաւ: Բայց աւելի՝ ժողովրդական ապստամբութեան մը պատճառաւ է որ՝ եւրոպացի վաճառականները ամենէն տաժանելի ճեղքումովն մատնուեցան: Բիւզանդացի պատմիչ Դիսկիփոր Գրիգորաս կը պնդէ որ 1343ին ի Տաւան, Վենետեցի մը թաթար մը սպաննելով, Տրապիզոնի ռապիկը զրգոյն էր. կը մտածէին թէ այսպիսի պատահարներ կրնային ամէն օր տեղի ունենալ՝ իտալացւոց ծայրասրիճան յուսորտներին պատճառաւ. այս զգացումէն մղուած՝ նետուեցան խտիններուն վրայ, մեծ մասը ջարդերին. ֆալցածը շնորհ խնդրեցին: Այս պատահարէն վերջ՝ Վենետեցիք առժամապէս դադարեցան իրենց առոււտրը Տրապիզոնի հետ: Սակայն 1344ին այս կողմերէն լաւագոյն լուրեր առնելով, Եւրոպայէն համարձակեցաւ երկու ցովանաւոր զրկելու պարզ փորձի համար, և ուրովհետև պայլը և իր խորհրդականները Տրապիզոնը թողուցած չէին, իրենց հրամաններցաւ նաւու բերք իրենց յանձնել տալու. բայց ցուպանաւորուն հրամանարներուն ըստած էր որ արքունիք պիտի երթային կայսեր իուլէրներ տանելու և իմացնելու իրենց պետութեան նպատակը՝ միջոտին նաւեր և վաճառականներ զըրկելու: Չենք գիտի թէ Վենետեցիք ասկէ վերջ իրենց այրած թաղը վերաշինելու աշխատեցան թէ ոչ. կամ թէ սկսելու էին չինի՝ ժողովրդական ապստամբութենէն առաջ. որոշ բան մը չի գիտցուիր: Այս միայն հաստատ է, որ վերաշինումը պատճառ եղաւ նոր կոտորմը շենովացւոց հետ: Թուրքերէն միշտ յարձակում կրելու վտանգէն պաշտպանուելու համար, Վենետեցիք կարեւոր կը համարէին իրենց թաղը շաշպատել փոսերով և ամուր զրկելով: Այս աշխատութիւնները կը տարածուէին նախնապէս ձեռնովացւոց տրուած հողին վրայ. հակառակ անոր որ իրենցմէ առնուած էր և ի փոխարէն տրուած էր 1316ին ծովային նաւաշինարանը, ասոնք չէին ուզեր համոզուիլ որ այս հողին վրայ իրենց խա

րաւուրը դադարած էր. բողոքեցին զործերուն շինութեանց դէմ առ կայսրը և իրմէ հրաման առին զործին դադարման: Փոխ-պայլը ամէն ինչ տեղեկացցոյ իր պետութեան, Վենետիկը տոճը Անտոյէ Տանտոնի՝ ձեռնուց զրկեց Նիքոլիտո ձեռնակնէնքս նոսարը՝ երթալու ներպայանալու շենովայի տոճին ձիովանին տի Մուրգայի, և զտեղապտի՝ Տրապիզոնի մէջ շենովացւոց բռնած խնամական վարմունքին վրայ, այնպիսի անմիտ հակառակութիւն մը՝ որ յարմար պահուն՝ այս ամրութիւնները կրնային իրենց ալ օգտակար ըլլալ: Վենետիկը տոճը սիրով ընդունեցաւ Վենետեցի պատուիրակին բողոքը, և միշտ վենետիկացի իր ազգին իրաւունքները խնդրոյնիս հողին վրայ, հրաման զրկեց իր ազգակիցներուն որ այլ ևս արգելք չըլլային Վենետիկացւոց ձեռնարկած աշխատութեանց:

### Վերջին ֆակեր:

Շենովացիք իրենց կողմէն՝ չէին հրաժարած վրժծ խնդրէն՝ եւրոպական զաղթականներուն շարդին համար, և վերստանալու իրենց լէոնտոկաստրոնի հին թաղը: Յամին 1348, կայսրութեան երկրորդ քաղաքին կիրասոնի տիրեցին, կողոպուեցին զայն և մոխրը վերածեցին: Յաջորդ տարին՝ երկու մարտանաւեր կաֆֆայէն մեկնելով՝ Տրապիզոնի առջև երեցան և ուզեցին կայսերական նաւերուն հետ կոտորի. այս կոտորի մէջ յաղթական ըլլալով, ետ քաշուեցան առանց մարդ ցամաք հանելու: Փաղաքին բնակիչ եւրոպացիք եղան որ այս փորձը քաւեցին. իրենց տունները կողոպուեցան և իրենք բանտարկուեցան: Բայց ամիս մը վերջ, շենովացիք նորէն քաղաքին պարիսպներուն տակ հրեցան. այս անգամ երեք ցուպանաւ կը բերէին կաֆֆայէն և նաւ մ'ալ Ամիսոսէն (Սամոս). նոյն ժամանակի կայսրը Միքայէլ տարիքէն տակարացի էր այս զօրութեան պատանդիքէն տարստեղծ տեղի տուաւ: Շենովացիք վերստանալով լէոնտոկաստրոնը (1349), շարունակ պահեցին զայն մինչև կայսրութեան անկումը: Այս տարին է վերջ՝ Վենետիկը հանրապետութիւնը զրկեց ի Տրապիզոն Նիքոլիտո Գուրիինի. ուզածը զիրեն է հասկնալ. շենովացւոց տրուած վերջին գիշուրով շենովացիք Վենետիկացւոց հաւասարակշռութիւնը կը կորսուէր. բայց իր ըրած փորձերը չի յաջողեցան: Թէ՛ այս պատճառաւ, և թէ՛ այս դաւրած շենովայի և Վենետիկ միջև եղած կոտորներուն համար (1351-1355), այնպէս եղաւ որ՝ Սև ծովուն մէջ շենովացւոց գերիշխանութեան հետեւանքով, Վենետեցիք այլ ևս սկսան միայն ռազմականերով մամբողջել, և Տրապիզոնի ու Վենետիկ միջև եղած առուտուրը երկար դադար մ'ունեցաւ: Վերջապէս Տրապիզոնի կառավարութիւնը փորձեր ընելով Վենետեան կառավարութեան հետ և փափաք յայտնելով որ կ'ուզէր վերգտել հին յարաբերութիւնները՝ դեսպանութիւն մ'առաքելով (1360). Լորէնցո Չելսի տոճը զրկեց Միքայէլ Կուլիէյովս՝ Ալեքսի Գ. կայսրը՝ իր և Կ. Պոլսոյ պայլին անուամբ

ողջունելու, աւետելու իր ազգին հաւանութիւնը դէպի Տրապիզոն նոր նաւեր դրկելու մասին, և իր գաղթականութեան համար նոր երկիր մ'ուզելու թոյլտուութիւնը: Կայսրը նշանակեց իրեն Ս. Թէոդոր Գաբրասի վանքին տաղիտը գտնուող հողը. բայց քիչ ասկէ՝ զիջում մը ( $1\frac{1}{10}$ ) չորհեց՝ կայսերական երկիրներուն մէջ Վենետիկեաց ծախած ապաւանքներուն տուրքերուն վրայ: Իրենց նշանակուած հողը շատ յարմար բան մը չէր՝ ինչ որ կ'երեւի, և թերեւ այս մտաւորամասնութեան մէջ կայսեր ներկայութեան, երբ ասիկա օր մը Մէլյան կը գտնուէր իր հետեորդներով՝ Զատիկ տօներուն առթիւ: Փամանակագիրը բան մը չտես, բայց խնդրոյ նիւթ հողին վրայ կը գտնուէին և անկարելի բան մը չէ որ այս մտաւորութիւնը պայլի միտքն եկած ըլլայ, նախանձորդ հիւպատոսին որ Լէոնտոկաստրոնի երջանիկ տէրն էր: Յամին 1367, նոր դեսպան մը Պետրոս Տալմէր, Մարկոս Կոնճառոյ տոնէն զրկուած, լաւ գիշուած ցեղանի մը վրան հասաւ Տրապիզոն. Կայսրն ընդունեցաւ նախորդ թոյլտուութեան յետպնդումը և Ս. Խայի ծայրը ստուգին զիջումը՝ այսպէս կոչուած՝ հոն եղած եկեղեցւոյն անուամբ: Հիւսման ունէր այս ծայրին վրայ հիմնելու թաղ մը, պաշտպանուած պարիսպով մը՝ որուն մէջ անկիւնագարդն և մէկ աշտարակը կայսրը խոտաւազաւ չինէր իր ծախքերով, փոսով մը շրջապատուած և զուրսէն կամուրջներով միացած: Դեսպանը տուրքերու փոխարկութիւն մը պահանջեց. բայց կայսրը մինչև նոյն զիջումները պահեց: Այս 1367ի վկայագրին կարեւորութիւնը անոր մէջ կը կայանայ որ Վենետիկեթ տիրացան այն երկրին ուր բնակեցան անընդհատ մինչև Տրապիզոնի կայսրութեան անկումը: Դաշտագետին մ'էր ծովուն վրայ ծայր մ'ունեցող, Լէոնտոկաստրոնի նման. ասոր պէս՝ յետակողմը յարաբերութեան մէջ էր փողոցին հետ՝ ուր ծրկու երկար շարքերու վրայ կը բարձրանային գաղթականներուն ծախելու և շտեմարանի խանութները: Այս երկու թաղերը քաղաքին շրջապատին մէջ չէին ներփակուեր. Պարստէներու արուարձանին մաս կը կազմէին. բայց պարիսպներով շրջապատուած էին և զօրաւոր աշտարակներով պաշտպանուած: Դուրսէն նախելով՝ վսեմ երեւոյթ մը կու տային՝ որուն չէին համապատասխաներ երբեք առեւտրական ոչ գործունէութիւնը և ոչ ալ արդիւնաբերութիւնը: Ամենէն աւելի ոչ ծաղկաւալ շրջանը տեսց մինչև 1340. այս թուականէն սկսեալ՝ կայսրութիւնը կը սկսի իր մերձաւոր Պարսկաստանի նման՝ ցոյց տալ անկման մը նշանները:

Շաք.

ՄԻՆԵԱՆ ԴԵԻՒՅԱՆ

## Տիպը Դ. ԱճէՄԵԱՆՆ

Անցեալ Յունիս 28<sup>ին</sup> Մեծապատիւ Պր. Դ. Աճեման, իւր անակնկալ այցելութեամբ Միխիթարեան Մայրավանդոցս, Թուեցաւ Հայրենի երկրէն աւետարներ կուռնկ մը. կուռնկը սիրելի է մասնաւոր կերպով պանդուխտ Հային: Եւ մենք չորս տարի կտրուած, անջատուած միւր յնչնդեան հողէն, մեր եղբարց և սիրելեաց ցարաց մոռունչն և հեծեծանքները կը լսէինք. ու ըստութիւնը դեռ չէր սիրտ ընկր անցնելու վանացս շեմէն: Պարոն Աճեմանին իւր հետը բերաւ միխիթարական լուրեր. իրեն հետ և իրմով մեր երեսներն ալ զուարթացան: Առաջին անգամ պատիւ ունեցանք ճանաչելու նախկին Ռուսական Դոմայի տաղանդաւոր Երեսփոխանը, որու միայն համբաւը համակրելի բրած էր իւր դէմը Հայ ժողովուրդին:

Ռւսիսութեամբ լսեցինք, նաև որ Նա Պարիսու Ռուս Պատուիրակութեան կողմէն բանաձեւացութիւն մ'ունեցեր էր, միարեւնելու կողակներու երկու հրամատարներն Դինիքին և Կոլչաքն, նպատակաւ վերահաստատելու խաղաղութիւնն Ռուսաստանում:

Ահա դարձեալ Հայաստանի զաւակներէ մինն, իւր ցեղի փայլուն ընդունակութեանց շնորհիւ, հարկւր միլիոնէն աւելի ժողովուրդեան մը պատգամաւոր և հաշտարար կը հանդիսանայ. փառաւորապէս կատարելով իրեն վրայ դրուած պարտականութիւնը, և բարձրացնելով ազգիս պատիւն:

Գործի յաջող ելքը արդէն լրագիրներէն ծանօթ էր, մեզի կը մնար ուրախակից լինել իրեն լուսաւոր մտքով և ճարտասան լեզուով կապած միութեան համար:

Կը մաղթենք իրաւամբ վայելէ իւր կորզած դափնիներու արդիւնքն և Ռուս պատուիրակութեան շնորհապարտ վստահութիւնն:

ՄԵՐՈՒ ԵՐԱՅԱՆՍ